№ 32 ՇԱԲԱԹ ՄԱՐՏԻ 19 1894 ՇԱԲԱԹ ՄԱՐՏԻ 19 № 32

ՔՍԱՆԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 րուբլի, կէս տարվանը 6 րուբ.
Առանձին համարները 7 կոպէկով.
Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Դպրոցական առողջապահութիւն. Պատգամաւորական ընտրութիւններ Երեւանում. Նամակ խմբագրութեան. Նամակ խմբագրութեան. Նամակ խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Ռօզբէրիի ճառը. Նամակ Պարսկաստանից. Արտաքին լուրեր.—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Մեր խաւարամիտ բանակը.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԴՊՐՈՑԱԿԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹԻՒՆ

VII

Դպրոցական հիւանդութիւններ: Մենք մի քանի խօսք ասեցինք դպրոցական կարճատեսութեան մասին: Մենք տեսանք, որ ինչպէս ցոյց է տալիս ստատիստիկան—բոլոր երկրներում կարճատեսութիւնը սաստիկ զարգացած է ուսումնարանների մէջ: Սրա պատճառը անտարակոյս տեսողութեան երկարատեւ լարումն է, իսկ այս վերջինը առաջանում է բազմաթիւ պատճառներից, այն է.—Նստարանների անյարմարութիւնից, դասագրքերի տպից, գրելու ձեւից, տետրակների դիրքից, երկար՝ մի ժամ կարդալ ու գրելուց: Այս բոլոր աննպաստ պայմանները ստիպում են երեխային լարել իր տեսողութիւնը, իսկ այս լարումն առաջացնում է կարճատեսութիւն:

Սակայն, ինչպէս երեւում է Մարտէնի վերջին զեկուցումից, յիշածս պայմանների ազդեցութիւնը շատ նուազ կը լինէր, եթէ միայն դպրոցներում դասերը աւելի կարճ լինէին, իսկ դասամիջոցները աւելի երկար: Նա նկատել է, որ կարճատեսութեան զարգացումն կարելի է դադարեցնել, եթէ միայն աշակերտին աւելի ժամանակ տան խաղալու և մարմնամարզութիւնով պարապելու:

Վարակիչ տարափոխիկ հիւանդութիւնները պարարտ հող են գտնում ուսումնարաններում իրանց զարգանալու համար: Մի հիւանդ երեխայ կարող է մի ամբողջ դասատուն վարակել: Այդ պատճառով դպրոցական առողջապահութիւնը շատ խիստ կանոններ է տալիս ուսումնարանը վարակումից ազատ պահելու համար:

Այս հիւանդութիւններն են՝ քութէշ, դիֆտերիտ, ծաղիկ, տիֆ, խրճամ (заушница), ջրծաղիկ, կարմրուկ, կապոյտ հազ:

Սրանցից կարմրուկը ամենաթեթեւն է և նրանից վախենալ հարկաւոր չէ: Այս այն հիւանդութիւններից է, որ իւրաքանչիւր մանուկ համարեա անպատճառ պէտք է ունենայ երբ և իցէ. հետեւաբար մինչեւ անգամ ցանկալի է, որ երեխաները վարակվեն, եթէ համաճարակը թեթեւ է: Մնացած միւս վարակիչ հիւանդութիւնները վերին աստիճանի երկիւղալի են մանկան համար, այդ պատճառով ուսումնարանական վարչութիւնը պէտք է խիստ հսկողութիւն ունենայ աշակերտների վրա այս ձեւով.

1) Երբ որ քաղաքում համաճարակ մանկական հիւանդութիւններ կան, ուսուցիչները պէտք է առանձին ուշ դարձնեն մանուկների առողջութեան վրա դասարանների մէջ: Հարփուխը, հազը, դողոցն ու ջերմը, բգացուերը, փորացաւերը, երեխայի ընդհանուր թուլութիւնը, ծուլութիւնը պէտք է անմիջապէս ուշադրութեան առնվեն և այդպիսի երեխաները իսկոյն հեռացվեն դպրոցից:

2) Երբ մի որ և է դասատան մէջ վարակիչ հիւանդութեան դէպքեր են եղել, այդ դասատունը պէտք է դատարկել և ախտահանել տալ, իսկ եթէ հիւանդութիւնը քութէշ է եղել, ծաղիկ և կամ դիֆտերիտ՝ հարկաւոր է ամբողջ դպրոցը ախտահանել: Եթէ այնու ամենայնիւ հիւանդութեան նոր դէպքեր լինեն, ուսումնարանը պէտք է փակել գոնէ վեց շաբաթով:

3) Բացակայ եղած աշակերտներին պէտք է ընդունել միայն նրանց բացակայութեան իսկական պատճառը իմանալուց յետոյ և, եթէ այդ պատճառը վարակիչ հիւանդութիւնն է եղել,—թոյլ տալ նրանց դպրոց յաճախել միայն հետեւեալ ժամանակամիջոցներից յետոյ (ըստ Լայէի). քութէշ—երբ առողջանալուց անցած կը լինի 7 շաբաթ, կապոյտ հազ—2 շաբաթ, խրճամ—8 օր, դիֆտերիտ—(հիւանդութեան սկզբից) 6 շաբաթ, ջրծաղիկ (հ. սկզբից) 4 շաբաթ, ծաղիկ (հ. սկզբից) 6—7 շաբաթ, բոլորը պէտք է լողացրած լինեն և նրանց բնակարանն ու հագուստը ախտահանած:

Հիւանդի կացարանում բնակվող երեխաները նոյնպէս չը պէտք է յաճախեն դպրոց, որպէս զի չը բերեն իրանց հետ վարակիչ տարրերը:

Նրանք կարող են վերստին ուսումնարան ընդունվել, եթէ հիւանդութիւնը եղել է՝ կարմրուկ—2 շաբաթից յետոյ, քութէշ—12 օրից յետոյ, կապոյտ հազ—12 օրից յետոյ, խրճամ—20—25 օրից, դիֆտերիտ 14 օրից յետոյ, ծաղիկ 3 շաբաթից յետոյ:

Այդ նշանակում է, որ եթէ մի տան մէջ, օրինակ, դիֆտերիտ է երեւացել և այդ տան առողջ երեխաները հեռացրած են տանից, սրանք կարող են յաճախել ուսումնարան, երբ հիւանդից հեռացրած օրից 14 օր անցած կը լինի:

Բժշկապետ Վ. Արծրունի

ՊԱՏԳԱՄԱՒՈՐԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՐԵՒԱՆՈՒՄ

—

Մարտի 13-ին, Երեւանի եկեղեցիներում միաժամանակ նշանակված էին ծխական պատգամաւորների ընտրութիւններ՝ թեմական դպրոցի հոգաբարձուներ ընտրելու համար:

Երկար սպասելուց յետոյ, վերջապէս մարտի 10-ին, ստորագրութեան թերթերի միջոցով յայտարարվեց ժողովրդին, որ կաթողիկոսական կարգադրութեամբ կիրակի օրը լինելու է ծխական պատգամաւորների ընտրութիւն, որոնք իրանց կողմից պէտք է ընտրեն թեմական դպրոցի համար հոգաբարձութիւն: Այս անգամ եկեղեցիներում բաւական թւով ընտրողներ էին հաւաքվել և ընտրութիւնը եղաւ աւելի գիտակցօրէն, քան թէ սպասելի էր: Որովհետեւ կարգադրված էր պատգամաւորներ ընտրել քահանաների թւի համեմատ՝ իւրաքանչիւրի ծխականներից ընտրելով երկուսը, այդ պատճառով Պօղոս-Պետրոս եկեղեցում պէտք է ընտրվէին 10-ը, որովհետեւ այդ եկեղեցին ունի 5 քահանայ, ս. Սարգիս եկեղեցում՝ 6-ը, Կաթուղիկէ եկեղեցում՝ 4-ը, Զօրավարում՝ 4-ը, Նորք քաղաքամասի եկեղեցում՝ 4-ը և ս. Յովհաննէսում նոյնպէս 4-ը, ընդամենը 32. դրա վրա աւելացնելով 6 երէցփոխներին, որոնք առանձնապէս ընտրված են համարվում, ուրեմն հոգաբարձական ընտրութեան մասնակցելու են 38 պատգամաւորներ:

Պօղոս-Պետրոս եկեղեցում ընտրվեցին. Ռ. Ջալալեան, Վասիլ Եղիազարեանց, Տ. Վարդանեանց, բժիշկ Յ. Յովհաննիսեանց, Յ. Մէլիքեանց, Գ. Տէր-Խաչատրեանց, Ա. Աֆրիկեանց, Գ. Անտոնեանց, Վ. Պօղոսեանց, Գ. Գասպարեանց:

Ս. Սարգիս եկեղեցում՝ Դ. Պօպօվեանց, բժիշկ Զ. Անդրէասեանց, Գ. Մնացականեանց, Յ. Սարուխանբէկեանց, Կ. Դաղամեանց, Ս. Դաղեանց:

Զօրավար եկեղեցում՝ Ա. Բաբայեանց, Ս. Տէր-Մարտիրոսեանց, Աբգար Բաբայեանց, Մ. Միրզայեանց:

Կաթուղիկէ եկեղեցում՝ Զ. Գէորգեանց, Ա. Այդինեանց, Հ. Գալումեանց, Ա. Գուլամիրեանց:

Նորք քաղաքամասի եկեղեցում՝ Ա. Տէր-Աւետիքեանց, Յ. Յովհաննէսեանց, Գ. Գեօզալեանց, Մ. Խանազեանց:

Ս. Յովհաննէս եկեղեցում, որտեղ ընտրութիւնը յետաձգված էր, ընտրութիւնը տեղի ունեցաւ երեկոյեան ժամերգութիւնից յետոյ: Ընտրվեցին՝ Մ. Աթանասեանց. Յ. Մէլիք-Աղամալեանց, Յ. Ղօրղանեանց և Թ. Տէր-Ղազարեանց:

Ընտրվածների անուանացուցակը առաջ բերելով, աւելորդ չենք համարում յիշել մի քանի անձանց անուններ, որոնք սեւացան: Այդպիսիներն են. Զօրավարում՝ Վ. Գեղամեանց. Նորք քաղաքամասում՝ Մ. Տէր-Պօղոսեանց, Ս. Սարգսում՝ մանկավարժ Սեդրակ Մանդինեանց և ուսուցիչները, և Պօղոս Պետրոս եկեղեցում՝ հոգաբարձու Վարդան Եղիազարեանց. իսկ ամենափառաւոր սեւացողը եղաւ ուսուցիչ Մակար Տէր-Սարգսեանց, որը յայտնի է փառնակէս աննախանձելի անունով: Այդ պարոնը 130 ժողովականներից միմիայն մի ձայն ստացաւ, ինչպէս իր պարոնը Թիֆլիսում՝ նոյնպէս մի ձայն ստացաւ:

Դա հասարակական արդար մի դատաստան էր, որ այդպէս փառաւոր կերպով արտայայտվեց ժողովրդական ընտրութիւնների միջոցով. և մի և նոյն ժամանակ ամենալաւ պատասխան նրանց բոլորի անվերջ վայրահաչութիւններին:

Ա—Դօ

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Էջմիածին, մարտի 5-ին

«Արձագանք» լրագրի 15 համարում կարդացի Էջմիածնից գրված հետեւեալ տողերը. «Վանական կառավարութեան նախագահ գեր. Ներսէս սրբազանի կարգադրութեամբ դադարեցրած է վանքի փոխից հաց տալը սինօդի ատենադպրին, ճեմարանի ուսուցիչ Սարգիս Տէր-Գաբրիէլեանցին և այլոց, որոնք միշտ մինչեւ օրս վանքից հաց էին ստանում Տ. Երեմիա եպիսկոպոսի նախկին կարգադրութեան համաձայն:»

Այդ տողերին նշանակութիւն տալ և պատասխանել՝ իր ժամանակին արժան չը համարեցի, տեսնելով, որ գրողի նպատակը լոկ հաճոյականութիւն է, և ուրիշ ոչինչ: Բայց երէկ կարդալով նոյն լրագրի 22 համարում Սարգիս Տէր-Գաբրիէլեանցի պատասխանը՝ որով մտրակում է իր մասին սուտ գրող անյայտ լրատուին, պարտք համարեցի և իմ կողմից այժմ պատասխանել լրատուին մի քանի խօսքով:

Սինօդի ատենադպիրը ես, ներքոյ ստորագրողս եմ, և բնաւ տրտունջ չունեմ իմ հացի դադարեցնելու մասին, այլ շատ և շատ գոհ եմ այդ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄԵՐ ԽԱՒԱՐԱՄԻՏ ԲԱՆԱԿԸ

II.

Ահա դարձեալ փաստեր:

Ինչպէս տեսանք, խաւարամիտները Վեհափառի հեղինակութիւնը, յարգը իբր թէ պաշտպանած լինելու համար, թոյլ չեն տալիս որ նրա իբր թէ բարեկամ որ և է անընդունակ տեսչին քննադատել. բայց նոյն խաւարամիտները մի բարձրաստիճան եկեղեցականի—Արիստակէս եպիսկոպոս Սեդրակեանի հասցէով չեն ամաչում ուղղել ամենաանամօթ յարձակումներ միայն այն պատճառով, որ Սեդրակեանի փայլուն գործունէութիւնը կուրացնում է այդ խաւարամիտների աչքերը:

Մակար կաթողիկոսի մահից յետոյ տեղակալ է կարգվում Երեմիա եպիսկոպոսը, որի գործունէութեանը խաւարամիտները չեն համակրում. բարձրացնում են տեղակալական հարց, յայտնում են, որ Տեղակալը ոչ մի իրաւունք չունի. մինչդեռ մի այդպիսի հարց մեր խաւարամիտները նախկին տեղակալների ժամանակ չը բարձրացրին, որովհետեւ նրանք գործում էին իրանց րեցեպտների համեմատ: Պրոֆէսոր Ղամբարեանի նման իրաւագէտը ցոյց է տալիս խաւարամիտների պաշտպանած մտքի անհեթեթութիւնը, բայց խաւարամիտները ոչինչ չեն ուզում լսել և սկսում են քարոզել անհնազանդութեան, անկարգապահութեան կարեւորութիւնը.—Ներսէսեան դպրանոցի հոգաբարձութիւնը, թեմերի առաջնորդները զանց են անում կատարել Էջմիածնից եկած կարգադրութիւնները, այն Էջմիածնի, որի անունով խաւարամիտները օրը հազար անգամ փարիսեցիաբար երդվում են...

Մակար կաթողիկոսից նշանակված Ուսումնական Մասնաժողովի անդամները մեր ծխական դպրոցների համար ձախ ձեռքով կազմեցին մի անհեթեթ ծրագիր, որը այնուամենայնիւ մեր խաւարամիտ օրգանները ընդունեցին գովասանքով, որովհետեւ Մասնաժողովի անդամները իրանց կողմնակիցներն էին. ներկայ Վեհափառից նշանակված Ուսումնական Մասնաժողովի անդամները այսօր կամենում են բարեփոխել այդ ծրագիրը: Խաւարամիտ «Արձագանքը» առանց կարմրելու յայտնում է, որ ներկայ Մասնաժողովի անդամները «պատահաբար նշանակված անձնաւորութիւններ են» և իրաւունք չունեն ծխական դպրոցների համար ծրագիր կազմել:

Հարցնում ենք, ինչու Մակարից նշանակված անդամները իրաւունք ունեն ծրագիր կազմել, իսկ այժմեան Վեհափառ Կաթողիկոսից նշանակված անդամները այդ իրաւունքը չունեն: Բացի այդ, դուք, Վեհափառ Կաթողիկոսի հեղինակութիւնը, յարգը կեղծաւորութեամբ իբր թէ պաշտպանած լինելու համար, թոյլ չէք տալիս քննադատել որ և է Վարդանեանցին, ապա ինչու թոյլ էք տալիս ձեզ նոյն Վեհափառ Կաթողիկոսից նշանակված մարդկանց անուանել «պատահական անձնաւորութիւններ». ինչու նոյն Վեհափառի նշանակած Թեմական տեսուչ հայր Մելեանցին անուանարկեցիք, յայտնելով որ նա կարօտութիւն ունի դաս առնելու իր Թեմում ծառայող ուսուցիչներից...

Որ մեր խաւարամիտները զուրկ են որ և է հաստատ համոզմունքից, որ մեր խաւարամիտները այս կամ այն սկզբունքը պաշտպանելով բացառապէս ղեկավարվում են իրանց ստոր շահերով, դրան իբրեւ ապացոյց, բացի թուածներից, կարելի էր բերել հարիւրաւոր այլ օրինակներ:

Մինչեւ այժմ բերած փաստերից, կարծում ենք աւելի քան պարզ է, որ հայ խաւարամիտ օրգանները դէպի մեր հոգեւոր իշխանութեան կարգադրութիւնները և առհասարակ դէպի մեր դպրոցական-եկեղեցական գործիչները գործ են դնում երկու սիստեմի չափեր, նայելով թէ իրանց ստոր շահերը, անձնական կեղտոտ նպատակները ո՞րն են պահանջում... Եթէ այդ գործիչները իրանց բանակից են, խաւարամիտները նրանց իւրաքանչիւր մի, նոյն իսկ ամենաանհեթեթ քայլը երկինք կը բարձրացնեն, որ և է քննադատութիւն ազգուրացութիւն, դաւաճանութիւն համարելով և ընդհակառակն՝ առաջադէմ բանակի ամենալուրջ մարդու ամենաօգտաւէտ գործը առանց խղճահարվելու, առանց ամաչելու կը ցեխոտեն... Սա երկրորդ:

«Ինչպէս են վերաբերվում հայրենասէրները դէպի ժողովուրդը», հարցնում է «Вѣстникъ Европы» ամսագրի յօդուածագիրը և ապա դրած հարցին պատասխանում է բաւական մանրամասնօրէն: Ռուս ժողովուրդը բաղկացած է մի քանի դասակարգերից, որոնք են, օրինակ, ազնուական կալուածատէրերը, հարուստ-կապիտալիստները և հասարակ ժողովուրդը—գիւղացիները: Դէպի այդ դասակարգերը ռուսաց յետադէմ օրգանները տարբեր դիրք են բռնում: Ռուս յօդուածագրի ասելով «խաւակարգադրութեան համար յօգուտ Էջմիածնի, որի քարերը ոսկի դառնալ կուզեմ և անշուշտ կը դառնային և կը դառնան, եԹէ յափշտակող ձեռքերը կտրվէին և կտրվեն: Բայց չեմ էլ կարող լռութեամբ անցնել և չասել ողորմելի լրատուին,—ամօԹ ձեզ, որ Ներսէս սրբազանին հաճոյանալու համար միայն, իբրև Թէ վանքի օգուտն էք պաշտպանում: Եւ գուցէ տհաճ էլ Թվի նրան ձեր արածը, քանի որ հրատարակում էք անտեղի լուր, նախ՝ առանց մտածելու Թէ Սինոդի մի պաշտօնէից, որը չունի Վաղարշապատում կամ այլ տեղ ըստ այլոց... ոչ մի սեպհականութիւն, երկու փունտ յայտնի ստացած հացը կըտրելով՝ միԹէ անհաւատարիմ ձեռքերից գաղտնի գլորված հազարների տեղը կը լցնի,—փառք Աստուծոյ, գրաւոր անջնջելի դօկումենտներ կան, ով կամենայ, կարող է ստուգել Էջմիածնին հասած վնասները, զրկանքները: Երկրորդ՝ առանց մտածելու, որ ինձպէս անտուն, անտեղ նախորդներս ոչ Թէ միայն հաց են ստացել, այլ և ձրի բնակվել են Վաղարշապատում գտնված վանքի սեպհական և այժմ յօգուտ վանքի տարեկան 200 ր. վարձ բերող տան մէջ, որի կարևոր և ոչ կարևոր նորոգութիւնները ևս եղել են վանքի դրամներով: Նոյնպէս կան գրաւոր անջնջելի դօկումենտներ, ով կամենայ, կարող է ստուգել: Ի՞նչու այնպէս բան ասեմ, որ սուտ դուրս գամ ու խայտառակվեմ ըստ ոմանց: Եւ երրորդ՝ առանց մտածելու, Թէ հացի խնդրում մէկի վնասաբեր և միւսի օգտակար կարգադրութիւնը կամենալով ցոյց տալ, միԹէ կանհետանայ հազարաւոր տեսնող աչքերից անցեալ երկու տարվան ընԹացքում կանգնած, ի յաւերժական յիշատակ իր կանգնողի, այն հոյակապ կրկնայարկ շէնքը, որ բարձրագլուխ փայլում է վանքի աւերակների մէջ. Թողնում եմ ասել վեհարանի և սեղանատան ամենակարևոր նորոգութիւնները, գեղեցիկ ճանապարհները, ջրանցքը, շուկայում նոր կրպակները, ըմպելիք պատրաստող, ցորեն մաքրող մեքենաները և այլ այսպիսի օգտակար բաներ:

Բայց կան մարդիկ, որք աչս ունին, տեսանեն և ոչ տեսանեն... իսկ Թէ որքան է ընդհանուր ծախքի զանազանութիւնը անցեալ երկու տարվան՝ համեմատութեամբ նախանցեալ տարիների ծախքի, որոնց մէջ չեն կատարվել այնպիսի բաներ, դարձեալ կասեմ, ով կամենայ, կարող է ստուգել անջնջելի դօկումենտներով:

Այսքանս բաւ է պարոն, կամ տէր, կամ տիրացու անյայտ լրատուին. յոյս ունեմ, որ այսուհետև իրան ազատ կը պահէ մտրակի տակ ընկնելուց. Այսքանս միայն կաւելացնեմ, որ եԹէ անունը ծածկած չը լինէր, այս բոլորը չէի գրի, այլ անձամբ իրան կասէի ու դրանով կը վերջացնէի:

Սինոդի ատենադպիր՝ Սիմէօն Փիլիպպոսեանց

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Էջմիածին, մարտի 1-ին

Մարդուս բարոյական և մտաւոր զարգացման բարձրութիւնն ու ցածրութիւնը երևում է նրա աշխարհահայեացքից: Բաւական է, որ մի մարդ իր ինքնուրոյն կարծիքը յայտնէ այս և այն խնդրի մասին, դրանից արդէն կերևայ նրա ներքին աշխարհի լուսաւոր և խաւար խորշերը: Այս ամենատարրական բանը չը գիտէ այն մարդը, որ յաւակնութիւն ունի տրամաբանութեան և հոգեբանութեան դասատու լինելու, և շատ դժգոհ է, որ իրան շուտով չեն տանում ճեմարան: Այս մարդը հռչակաւոր բԹամիտ Սեդրակ Մանդինեանցն է, որ պարբերաբար դուրս է գալիս գրական ասպարէզ, որ ստացած տիտղոսները յաւերժացնէ իր վրա, և յաւերժացրել է այս անգամ հետևեալ տողերով.

«Աղայեանցն ինչ որ գրել է, ամբոխին անբարոյականացնելու և մոլորեցնելու համար է գրել, իսկ ինքը մի հացկատակ է, մի ապերախտ հացկատակ»: («Արձագանք» № 22):

Բաւական է, որ մէկը առաքինի մարդու անուն և պատիւ ստանալու յոյսից զրկվի, այնուհետև նա կը սկսէ դատել և գործել Ս. Մանդինեանցի նման: Այդ պարբերութիւնը, որի մասերի մէջ ոչ մի տրամաբանական կապ չը կայ, որ մարմնացեալ անբարոյականութիւնից էլ անբարոյական է, մի և նոյն ժամանակ դա մի ճիչ է, յուսահատական ճիչ, որ կարող է արձակել միայն դէպի դժոխք գլորվող հոգին: Ուրեմն ես բոլորովին հասել եմ նպատակին և շատ ուրախ եմ: Բայց այդ դեռ քիչ է: Դեռ պէտք է տանջել և շարունակ տանջել:

ՄիԹէ իրաւ Սեդրակ Մանդինեանցը, որ մասնագէտ մանկավարժի տիտղոս ունի, այն անկման է հասել, որ չը գիտէ, Թէ իր այդ բարբանջանքը իրան է վերաբերում, ինքն է ասողը: Գուցէ և գիտէ, բայց ասում է, ենԹադրելով, որ այդպէս ասելով կարող է մոլորեցնել ամբոխին, հաւատացնել նրան, որ իր ասածը ճշմարիտ է: Եւ իր հոգու այս բնորոշ յատկութիւնն է, որ իմ վզին է փաԹաԹում, ասելով՝ «Աղայեանցն ինչ որ գրել է, ամբոխին անբարոյականացնելու և մոլորեցնելու համար է գրել»: Այս նորագոյն վարմունքի համար պէտք է մի նորագոյն անուն հնարել և ես կասեմ «հոգեփոխանակութիւն», որ Թէև երկար է, բայց շատ ճիշդ է: Փարիսեցիք մեր դէմ գրելիս միշտ հոգեփոխանակութիւն են անում, իրանց հոգին դնում են մեր մէջ և մերն իրանք յափշտակում և այնուհետև մեզ սկսում են նկարագրել ճիշդ այնպէս, ինչպէս որ իրանք են, իրանց պէս տարտուֆ, իրանց պէս ստախօս, իրանց պէս շահախնդիր և հացկատակ: Եւ ինչպէս մարդ չը զզվի այդ հոգեփոխանակութիւնից: Ախր, պարոններ, մենք որ ձեզ ատում ենք, հէնց այդ յատկութիւնների համար է, որ ատում ենք: ԵԹէ դուք մենք էք, էլ ինչու ենք ատում ձեզ: Սրա վրա ես մի անցք պատմեմ, որ բանն աւելի պարզվի:

Երուսաղէմում Սողոմոնի տաճարն ուզեցայ տեսնել: Դեռ ներս չը մտած, դուրսը, պարսպի տակ, Իսրայէլի զաւակներից մի խումբ տեսայ հաւաքված, որոնք մի մի սաղմոս ձեռներին կարդում էին և արտասուքով Թրջում պարսպի քարերը: Այս տեսարանը ինձ շատ ազդեկտուր Թըվաց, շատ ազդեց վրաս և ինձ յուզեց: Հէնց այդ րոպէին, երբ իմ հոգին էլ իմ հայրենիքն էր Թըռել, ողբացողները շուռ եկան և ձեռքները մէկնեցին ինձանից ողորմութիւն ուզելու:—Ա՛խ, անպիտաններ, սառը ջուր ածեցիք գլխիս, բացականչեցի ես: Ուրեմն փողի համար էք լաց լինում, իսկ ես կարծում էի, Թէ հայրենասիրական անշահասէր հոգուց է բղխում ձեր լաց ու կոծը: Իմ վարմունքը նկատեց նրանցից մէկը և սաստիկ բարկացաւ միւսների վրա: Հիմա ասեմ, Թէ առակս զի՞նչ ցուցանէ:

Մեր փարիսեցիքն էլ, որ փարիսեցի ջհուդների ճիշդ պատճէնն են, մի վարձկան խմբակ ունեն մի քանի հոգուց բաղկացած, որոնք Էջմիածնի պարիսպների տակ շարունակ ողբում են հառաչելով, Թէ մեզ հալածեցին, մեզ աքսորեցին, վանքն ու ճեմարանը քանդեցին, վա՜յ մեզ, ի՜նչ օրի հասանք: Եւ գիտէք ով արաւ այդ բոլորը.—Աղայեանցը: Այդ անպիտան և ապերախտ հացկատակը գնաց Երուսաղէմ, այնտեղ սուտ արտասուք Թափեց (իրանց նման), յետոյ եկաւ այստեղ հարայ-հրոց բարձրացրեց, ամբոխին մոլորեցրեց, մեր դէմ գրգռեց (մանկավարժ Մանդինեանցի նման), վերջապէս իր նպատակին հասաւ, ճեմարան մտաւ և նրա դըռները փակեց մեր երեսին:

Մի այսպիսի սուգ ու շիւանի ժամանակ հայր Եղիշէ վարդապետը, որի խուցը պարսպի գլխին է, կարդում է ՄատԹէոսի Աւետարանից հետևեալ կտորը բարձր ձայնով:

«Վա՜յ ձեզ դպրաց և փարիսեցւոց կեղծաւորաց, զի նման էք գերեզմանաց բռելոց, որ արտաքոյ երևին գեղեցիկք, և ի ներքոյ լի են ոսկերօք մեռելոց և ամենայն պղծութեամբ... Օձք, ծնունդք իժից, զիա՞րդ փախուցուք ի դատաստանէ գեհենին...»—Բաւական է, ասում են հայր Եղիշէին. գայլերի գլխին Աւետարան չեն կարդալ, դրանք հա՜ց են ուզում, հա՜ց: Վանքի հացի համը բերաններումն է մնացել:

Եւ այս հացկատակներն են ահա, որ յանդգնում են ինձ անուանել հացկատակ: Կարժէ՞ արդեօք այս տեսակ խելք ու խիղճ, ամօԹ ու պատկառանք կորցրած մարդկանց հետ վէճի մէջ մտնել, և ինչ օգուտ դրանից:

Ղ. Աղայեանց

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, մարտի 18-ին

Կարդալով «Մշակի» № 30-ի մէջ յօգուտ Կարսի և Երևանի նահանգների կարօտեալների խմբագրութեանդ ուղարկված գումարների հաշիւը, որոնց մէջ նաև մեր կողմից յանձնված 200 րուբլին՝ պարտք ենք համարում յայտնել ի գիտութիւն նուիրատուների, որ մենք երեք ցուցակով հանգանակել էինք ընդամենը 767 ր. և 50 պուդ ցորեն: Այդ գումարից 200 ր. յանձնեցինք «Մշակի» խմբագրութեան՝ կարօտեալներին հասցնելու համար. (մէկ րուբլի էլ դրինք իբրև ճանապարհածախս), իսկ մնացած գումարը, 566 ր. և 50 պուդ ցորեն, ցուցակներով հանդերձ, յանձնեցինք Կ. Հ. Բարեգործական ընկերութեան խորհրդին, որը այս գումարի մասին, ուրիշ նուէրների հետ միասին յայտնեց ի գիտութիւն հասարակութեան, խոստանալով մանրամասն հաշիւ տպագրել առանձին («Մշակ» № 24): Մեր կողմից պարտք ենք համարում շնորհակալութիւն յայտնել նուիրատուներին և մասնաւորապէս տիկին Վ. Ալիխանեանին և պ. Ա. Խուդավէրդեանցին, որոնք հանգանակութեան գործում յօժարակամ աջակցութիւն ցոյց տուին:

Ս. Յարութիւնեան
Յ. Քոչարեան
Ստ. Մալխասեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մեզ հաղորդում են Էջմիածնից, որ ծերունի Մեսրոպ արքեպիսկոպոս Սմբատեան առաջարկված է սինոդի անդամ: Սինոդի անդամ լինելով Մեսրոպ արքեպիսկոպոսը պէտք է լինի և տեղապահ:

Մեզ հետևեալ տեղեկութիւնն են հաղորդում Թավրիզից. «Այստեղի երիտասարդութիւնը մի գեղեցիկ միտք է յղացել,—բանալ մի նոր ընԹերցարան Գրիգոր Արծրունու անունով: «Արծրունի» ընԹերցարանը, բացի մատենադարանի և ընԹերցարանի սրահներից, կունենայ և մի երրորդ սրահ, որը պէտք է ծառայէ իբրև ակումբ, որտեղ ազատ ժամերին կարող են հաւաքվել ինտելիգենտ անձինք և փոխանակ ԹղԹախաղով անցկացնելու ժամանակը, արծարծել և մշակել զանազան հարցեր»:

Կովկասի հայոց Բարեգործական ընկերութեան Կարսի ճիւղը որոշել է բանալ Կարսում ձրի ճաշարան. բայց միջոցներ չունենալով՝ հեռագրով դիմել է կենտրոնական խորհրդին, և յայտնելով, որ անհրաժեշտ կարիք կայ ձրի ճաշարան բանալու, խնդրում է տիկին Տէրեան-Կորգանովայի տուած կօնցերտի ամբողջ մուտքը յատկացնել Կարսի ձրի ճաշարանին:

Սուտ լուրեր հաղորդելու մոնոպոլիան, ինչպէս երևում է, միայն Թիֆլիսի հայոց Թերթերին չէ պատկանում.—Օդէսայի մի լրագիր էլ, «Одесскія Новости» լրագիրը, նոյնպէս վարակվել է այդ ախտով. ահա Թէ ինչ է գրում նա. «Հայոց ԿաԹողիկոսը ներկայ տարվայ մայիս ամսին սպասվում է Օդէսայում: Ներկայումս Նորին ՕծուԹիւնը գտնվում է Պետերբուրգում»: Ինչպէս յայտնի է, ԿաԹողիկոսը ներկայումս Պետերբուրգում չէ, այլ հանգիստ նստած է Էջմիածնի վեհարանում: Արդարութիւնը պահանջում է խոստովանել, որ Թիֆլիսի հայոց յայտնի Թերթերի և Օդէսայի լրագրի ստերի մէջ մի տարբերութիւն կայ.—հայոց Թերթերը դիտմամբ են ստեր հաղորդում, իսկ Օդէսայի լրագիրը սուտ է ասել միայն սխալմամբ:

Մեր երկրի այն վաճառականները, որոնք առևտրական կապեր ունեն Պարսկաստանի հետ, ներկայումս մեծ վնասներ են կրում, մանաւանդ նրանք, որոնք Ռուսաստանից Պարսկաստան ապրանք են ուղարկում: Դրա պատճառը գլխաւորապէս արծաթի գնի ընկնելն է. մի արծաթ Թումանը, որ առաջ արժէր 3 րուբլի, այժմ 1 ր. 75 կ. է, այնպէս՝ որ այն ապրանքը, որ առաջ արժէր 1 րուբլի և ծախվում էր այդ գնով, այժմ պէտք է ծախել 2 ր., որ վնաս չը լինի: Իսկ 1 ր. արժեցող ապրանքին 2 ր. տալ դժուարանում է պարսիկը և աւելի լաւ է համարում չը գնել ռուսական ապրանք: Մեր կառավարութիւնը արդէն ուշադրութեան է առել այդ խնդիրը և միջոցներ են որոնվում այդ առևտրական կրիզիսի առաջն առնել:

Բագուի «Каспій» լրագիրը հաղորդում է, որ կ. Ա. Խրեցկի հեռագիր է ստացել ներկայումս

բամիտների տեսակէտով հասարակութեան ստորին, այսինքն ամենաաղքատ և ամենաբազմաթիւ դասակարգերի անմիջական կոչումը կայանում է նրանում, որ ծառայեն իբրև անսպառ աղբիւր ամեն տեսակ օժանդակութեան և բարօրութեան բարձր դասակարգի և խոշոր արդիւնաբերութեան ներկայացուցիչների համար»:

Եւ այդպէս, ռուս խաւարամիտները պաշտպանում են կալուածատէրերի և հարուստների շահերը ի վնաս հասարակ դասակարգի շահերի:

Այդպէս վարվում են և մեր խաւարամիտները:

Մենք կալուածատէրերի դասակարգ չունենք. դրա փոխարէն ունենք հոգևորականութիւն: Ո՞ւմ չէ յայտնի, որ ամենատգէտ հոգևորականը պաշտպանութիւն է գտնում մեր խաւարամիտ օրգանների կողմից. ո՞վ չը գիտէ, որ խաւարամիտների կարծիքով, ոչ Թէ հոգևորականութիւնն է ժողովրդի համար, այլ ժողովուրդը հոգևորականների համար: Միւս կողմից, ո՞վ չը գիտէ, որ հարուստ ազգայիններին խաւարամիտները օրը հազար անգամ շոյում, երկրպագում, խնկարկում են:

Ռուս յօդուածագիրը այնուհետև պարզում է, Թէ ինչպէս խաւարամիտ մամուլի հրապարակախօսները դէմ են գիւղական խորհուրդներին (сельскій сходъ) և առհասարակ ժողովրդական ընտրողական սկզբունքին: Մեր խաւարամիտները նոյնպէս դէմ են ընտրողական սկզբունքին, միայն քաջութիւն չունեն այդ խոստովանվելու, եԹէ չը հաշւենք «Արձագանքի» չենք յիշում ո՞ր համարի առաջնորդողը. ընդհակառակն, այդ կեղծաւորները և փարիսեցիները ամեն օր հաւատացնում են մեզ, որ իրանք Հայաստանեայց եկեղեցու աւանդած ընտրողական սկզբունքի ջերմ պաշտպաններ են: Հաւատա՞նք արդեօք այդ աղուէսական խորամանկութիւններին:—Ո՛չ: Ահա փաստերը:

Յովնանեան դպրոցի հոգաբարձութեան ժամանակամիջոցը վաղուց է ինչ լրացել է. հարկաւոր է նոր ընտրութիւն անել. անանուն Թերթը առանց ամաչելու յայտնում է, որ «կարիք կը կայ շտապել ընտրութիւն անելու. խօ աշխարքս չի քանդվի, եԹէ Յովնանեան դպրոցի ներկայ հոգաբարձութիւնը շարունակի մի քանի տարի էլ իր լիազօրութիւններից աւել կառավարել դըպրոցը»:

Եւ համանման դատողութիւններ տուող Թերթերը առանց կարմրելու և խղճահարվելու անուանում են իրանց ընտրողական սկզբունքի պաշտպաններ:

Ընտրողական սկզբունքի անկեղծ պաշտպանը որ և է ընտրութեան ժամանակամիջոցը լրանալու րոպէին կաշխատէ կատարել նոր ընտրութիւն, կաշխատէ դիմել հասարակութեան կարծիքին. ով ընտրութիւնը յետաձգում է, Թէկուզ մի օր, նա զրկում է հասարակութիւնը իր իրաւունքներից... Յետաձգելով ընտրութիւնը, դուք պարզապէս խոստովանվում էք, որ վախենում էք հասարակական կարծիքից, որ ընտրողական սկզբունքը ձեզ ձեռնտու չէ... չէ՞ որ դուք ուրախութեամբ կը դիմէիք նոր ընտրութեան, եԹէ իմանայիք որ հասարակական կարծիքը ձեր կողմն է...

Բայց չէ, դուք զգում էք, որ հասարակութիւնը սկսում է ճանաչել ձեր մերկութիւնը, որ հասարակական կարծիքը սկսում է երես դարձնել ձեզնից, և ահա Թէ ինչու, խաւարամիտներ, կամենում էք յետաձգել ամեն մի ընտրութիւն. բայց մինչև երբ պէտք է յետաձգէք. չէ՞ որ քանի առաջ գնանք, այնքան հայ հասարակութիւնը աւելի կը ճանաչի ձեր հոգու աղքատութիւնը, ձեր ձգտումների ստորութիւնը, ձեր բոլոր ասածների կեղծութիւնը: Բայց մի բանով կարող էք մի փոքր սփոփվել, խաւարի ծնունդներ. մինչև հայ հասարակութիւնը կը հասնի այդ երջանիկ ժամանակներին, դուք դեռ միջոց ունէք մութ ջրերում ձուկ որսալ...

«Вѣстникъ Европы» յօդուածագիրը մերկացնում է ռուս յետադէմների և մի շարք այլ պակասութիւնները, որոնք կազմում են և մեր խաւարամիտների անխախտելի սեփականութիւնը: Բայց որովհետև մեր յօդուածը առանց այն էլ բաւական երկարացաւ, ուստի անկարելի եղաւ պարզել մեր խաւարամիտների և այդ տխրահռչակ պակասութիւնները: Յոյս ունենք, որ հետաքրքիր ընԹերցողները կը դիմեն ռուս ամսագրի յիշեալ յօդուածին՝ խաւարամիտների հակակրելի ոգին աւելի լաւ ըմբռնած լինելու համար:

Շիրվանցի

Պետերբուրգում գտնուող՝ Բագուի նահանգապետ Բօգգէից, որի մէջ վերջինս հաղորդում է, թէ պ. Իւէցկի հաստատուել է Բագուի քաղաքագլխի պաշտօնում։

—

Յօգուտ Գրիգոր Արծրունու արձանի և գրուածքների տպագրութեան ստացանք Մերվից, Բաղդասար Տէր-Բաղդասարեանի միջոցով՝ 25 րուբլի, հանգանակած հետևեալ անձինքներից. Ալէքսանդր-բէկ Մէլիք-Ադամալեանց 10 ր., Յ. Տէր Ս. Խօլխօղբաշեանց 5 ր., Բ. Տէր-Բաղդասարեանց 5 ր., Սարգիս Ա. Սարգսեանց 5 ր.։ Ուրեմն նախկին 2695 րուբլի 51 կօպէկի հետ այժմ ունենք 2720 րուբլի 51 կօպէկ։

—

Թիֆլիսի նահանգապետ իշխան Շէրվաշիձէ կը մնայ Պետերբուրգում մինչև ապրիլի 1-ը, և ապա, ինչպէս հաղորդում են տեղական լրագիրները, ճանապարհ կընկնի դէպի Թիֆլիս։

—

Երգչուհի օրիորդ Պապայեան, որը երգեցողութեան մէջ ցոյց տուած իր աչքի ընկնող ձիրքով գրաւել է արժանաւորապէս Թիֆլիսի հասարակութեան և թատրօնասէր դասակարգի համակրութիւնը, շուտով պէտք է ուղևորվի արտասահման կատարելագործվելու համար։ Իր վերջին հրաժեշտի կօնցերտը օրիորդ Պապայեան տալու է ամսիս 27-ին։ Այս առիթով չենք կարող չը նկատել, որ յարգելի օրիորդը, գրաւելով հասարակութեան համակրութիւնը, իբրև երգչուհի, ամենայն միջոց և հնարաւորութիւն ունէր գրաւել և նոյն հասարակութեան յարգանքը, հետևելով իր ընկերուհիների օրինակին, որոնք չը մոռացան մտածել և կարօտեալների մասին։ Գեղարուեստի ծառայութիւնը միշտ անբաժան պէտք է լինի մարդասիրութեան գաղափարի ծառայութեան հետ, որը, դժբախտաբար, յարգելի օրիորդը ցոյց չը տուեց, չը նայելով որ քանի անգամ նրան դիմումներ են եղել։ Եթէ հասարակութիւնը ամբողջ սէզօնի ընթացքում միշտ յաճախելով թատրօն, իր ընծաներով, օվացիաներով ցոյց տուեց յարգելի երգչուհուն իր համակրութիւնը և աջակցութիւնը, կարծում ենք, որ դրա փոխարէն կարելի էր մի բարոյական վարձատրութիւն տալ հասարակութեանը, իսկ ամենալաւ բարոյական վարձատրութիւնը կը լինէր որ և է մի ներկայացում կամ կօնցերտ տալ մի որ և է բարեգործական նպատակով։

—

Մարտի 16-ին, չորեքշաբթի, կարճատև հիւանդութիւնից յետոյ վախճանվեց Թիֆլիսում նահանգական զինուորական-բժշկական տեսչի օգնական բժշկապետ Իվան Իվանօվիչ Գէյդէման։ Նրա թաղումը տեղի ունեցաւ երէկ, մարտի 18-ին։ Դագաղի վրա դրված էին բաւական պսակներ։

—

Հինգշաբթի, ամսիս 17-ին, յայտնի ջութակահար Օնդրիժիչէկ, իր ամուսնու և պիանիստ Ֆրէմկէի մասնակցութեամբ, Թիֆլիսի արքունական թատրօնում տուեց իր առաջին կօնցէրտը, որ մեծ աջողութիւն ունեցաւ։ Տաղանդաւոր ջութակահարը արժանացաւ հասարակութեան ջերմ ծափահարութիւններին։ Երկրորդ կօնցերտը լինելու է ամսիս 20-ին, կիրակի։

—

Ժողովրդական լուսաւորութեան մինիստրութեան մշակած նախագծի համաձայն, տնային ուսուցչուհիների կոչում ստանալու համար սահմանված քննութիւնները այլ ևս չեն լինելու։ Այդ կոչումը կը յատկացվի իգական միջնակարգ դպրոցներում աւարտածներին միայն։

—

Մեզ հեռագրում են Հին-Նախիջևանից, մարտի 17-ից. «Այստեղ բազմաթիւ հասարակութեան ներկայութեամբ, եկեղեցում հոգեհանգիստ կատարվեց պրոֆէսօր Ներսէս Ներսէսեանի յիշատակին»։

—

Այս օրերս, մայրաքաղաքի լրագիրների խօսքերով, կը քննվի պետական կալուածների մինիստրի առաջարկութիւնը, առանց մաքսի Ռուսաստան բերելու ամերիկական խաղողի վազեր այն այգետէրերի համար, որոնք կը ցանկանան այդ վազերը բերել տալ պետական կալուածների մինիստրութեան միջոցով։

—

Ստացանք Կարսի, Երևանի և Նոր-Բայազէտի կարօտեալների համար. 1) Բաթումից, Յարութիւն Մնացականեանի միջոցով, հանգանակված 50 րուբլի և 2) Սև քաղաքից, Միքայէլ Տէր-Խաբայէլեանի միջոցով, Մանթաշեանի նաւթային գործարանի հայ արհեստաւորներից հանգանակած 26 րուբլի։ Ուրեմն մեր խմբագրութեան մէջ մնացած 84 րուբլու հետ այժմ ունենք 160 րուբլի։ Այդ գումարից, այսօր, մարտի 19-ին, 100 րուբլի ուղարկեցինք Կարս, Բարեգործական ընկերութեան ճիւղին, բացվելի ձրի ճաշարանում գործ դնելու համար։ Խմբագրութեան մէջ մնում է 60 րուբլի։ Ուրեմն մեր խմբագրութեան մէջ այդ նպատակով մինչև այժմ հաւաքված է 862 րուբլի, և արդէն ուղարկված է կարօտեալներին, 802 րուբլի։

—

Նաւթաբեր հողեր են գտնվել և Թուրքեստանում։ Նամանգանի գաւառում շատ տեղերում նաւթ է դուրս գալիս բաւականին առատօրէն։ Պետական կալուածների մինիստրութիւնը յատկացրել է 4000 րուբլի գումար նաւթահորեր քանդելու և նաւթի աղբիւրների առատութիւնը որոշելու գործին։ Հետազօտող և գործավար նշանակված է ինժեներ Միխայլօվ, որ նախ քան Թուրքեստանում փորձեր անելը, ծանօթացել է նախօրօք այդ գործին Բագուի շրջակայքում։

—

Երէկ, մարտի 18-ին, վերսկսվեցին Գիւղատնտեսական ընկերութեան մէջ տեղի ունեցող զրոյցները, որոնք դադարած էին մի առ ժամանակ։

—

Տեղական ռուս լրագիրները հաղորդում են, որ Վլադիկավկասի ճանապարհի վրա այնպիսի ձիւնախառն բուք է, որ բանւորները հրաժարվում են մաքրել ճանապարհը։ Անհնար է լինում ստիպելու նրանց բանել, մանաւանդ այն ժամանակից յետոյ, երբ նրանց ընկերներից մի քանիսը մնացին ձիւնի տակ։ Այսու ամենայնիւ երէկ, մարտի 17-ին, Գուդաուրի և Կօբիի մէջ հաղորդակցութիւնը վերականգնված է։

—

Մեզ գրում են Ալէքսանդրօպոլից, որ այդ քաղաքում գտնվող Արդահանի զօրագունդը տեղափոխվելու է Դիլիջան։

—

Մեզ հաղորդում են, որ կիրակի օր, մարտի 20-ին, Թիֆլիսի վանքի մայր եկեղեցում՝ հոգեհանգիստ է կատարվելու պրօֆէսօր Ներսէս Ներսէսեանի յիշատակին։

—

Անդրկովկասի զանազան տեղերում յաճախ նըկատված է, որ ցորենի հատիկը սևանում է, փոշի դառնում։ Դրա պատճառը առանձին տեսակ մանր սունկեր են, որոնք երևում են հասկերի վրա և փչացնում հացահատիկը։ Այդ հիւանդութեան,—որ կոչվում է մրիկ,—առաջն առնելու համար, պէտք է մաքրել նախօրօք սերմացու ցորենը և ապա նրան ցանել։ Ցորենը մաքրելու համար «Кавказское сельское хозяйство» լրագիրը առաջարկում է հետևեալ միջոցը։ Մի պուդ ցորեն մաքրելու համար պէտք է վերցնել 11—12 մսխալ պղնձի արջասպ (կապոյտ քար, мѣдный купоросъ) և հալել նրան տաք ջրի մէջ և յետոյ դրան աւելացնել այնքան ցուրտ ջուր՝ մինչև ջուրը բարձրանայ ցորենից 2—$2^{1}/_{2}$ վերշօկ և այդպէս թողնել 12—16 ժամ, որից յետոյ պէտք է ցորենը չորացնել և որչափ կարելի է շուտով ցանել։

—

Մեզ հաղորդում են, որ Թիֆլիսի հայոց Հրատարակչական ընկերութեան տարեկան ընդհանուր ժողովը նշանակված է ամսիս 26-ին, երեկոյեան ժամը 8-ին, քաղաքային դումայի դահլիճում։ Վարչական վերջին ժողով նշանակված է հինգշաբթի, մարտի 24-ին, երեկոյեան ժամը 8-ին. ուստի նոր անդամ գրվել ցանկացողները պէտք է յայտնեն իրանց ցանկութեան մասին մինչև այդ օրը։

—

ՇՈՒՇՈՒՑ մեզ գրում են. «Ամսիս 13-ին կայացաւ Բարեգործական ընկերութեան տեղական վարչութեան ընդհանուր ժողովի նիստը։ Նշանակված էր ընտրութիւն վարչութեան երեք անդամների և երեք փոխ-անդամների։ Ժողովին ներկայ էին 130 անդամներից միայն 33 հոգի։ Ընտրվեցին վարչութեան անդամներ՝ Սարգիս Ղուլիքեխեանց, Դաւիթ Ներսէսեանց և Իլիա Շահնազարեանց։ փոխ-անդամներ՝ Բագրատ Տէր-Սահակեանց, Գէորգ Ղարաջեանց և Անդրէաս Աբրահամեանց։ Վերաստուգող յանձնաժողովի անդամներ՝ Յովհաննէս Գիւլնազարեանց, Ա. Աբրահամեանց, և Միրզա Տէր-Սարգսեանց։ Ընտրութիւնը շատ աջող է»։

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻՑ մեզ գրում են. «Այս օրերս Պետերբուրգի բժշկական ակադէմիան յայտնեց, որ դօկտորի աստիճանին է արժանացել մի հայ,—բըժիշկ Սամուէլ Շահ-Պարօնեանը։ Մենք առիթ ունեցանք փետրվարի 24-ին ներկայ լինելու դիսպուտին։ Բժշկի դիսերտացիայի նիւթ էր «о регенераціи мерцательнаго эпителія и его значеніе при легочныхъ заболѣваніяхъ»։—Նա արժանացաւ իր օպօնէնտների միաձայն գովասանքին, որոնք բըժշկի աշխատանքը համարում են գիտնական վերին աստիճանի լուրջ աշխատանք»։

—

ԴԶԼԱՐԻՑ մեզ գրում են. «Մեզանից 20 վերստ հեռաւորութեան վրա գտնվող Ղարաջալիլ գիւղի ուսումնարանում, որը բացվեց այս տարի, բաւական շքեղ կերպով կատարվեց Վարդանանց տօնը։ Գիւղացիների վրա շատ լաւ տպաւորութիւն թողեց այդ պատմական տօնի հանդէսը»։

—

ԱԼԷՔՍԱՆԴՐՕՊՕԼԻՑ մեզ գրում են. «Աղքատ ընտանիքների համար բացած ձրի ճաշարանը մեծ նպաստ է ցոյց տալիս աղքատ դասակարգի օրական պէտքերին։ Գովութեան արժանի են կառավարիչները, որոնք եռանդով աշխատում են թեթևացնելու թշուառների դրութիւնը։ Օրական բաժին ստանում են 100 ընտանիքներ»։

—

ԴԱՐԱՉԻՉԱԳԻՑ մեզ գրում են, մարտի 11-ից. «Կովկասեան հայոց Բարեգործական ընկերութեան Երևանի ճիւղի վարչութեան կողմից մի մասնախումբ է ուղարկված այս կողմերը՝ չքաւոր ազգաբնակութեան նպաստ հասցնելու համար։ Մասնախումբը շրջելով Ծաղկաձորի շրջանի գիւղերը՝ հացահատիկներ է բաժանում աղքատ գիւղացիներին։ Գիւղական ազգաբնակութիւնը իր խորին շնորհակալութիւնն է յայտնում բարեգործ անձինքներին և ժողովրդին օգնութեան ձեռք մեկնողներին առհասարակ»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՌՕԶԲԷՐԻԻ ՃԱՌԸ

—

Մարտի 5-ին անգլիական մինիստր-նախագահ Ռօզբէրի մի մեծ քաղաքական ճառ արտասանեց Էդինբուրգում, որով նա կամենում էր լրացնել իր ասածները արտաքին գործերի մինիստրութեան և լօրդերի ժողովի մէջ։ Այդ նշանաւոր ճառը դեռևս ամբողջապէս չէ տպված լրագիրների մէջ։ Սակայն ուշադրութեան արժանի է այն հանգամանքը, որ իրլանդական կուսակցութեան առաջնորդներից մէկը՝ Դիլլօն, լսելով այդ ճառը, ասեց, որ իրլանդական ինքնավարութեան խնդիրը լօրդ Ռօզբէրիի անձնաւորութեան մէջ գտել է մի ազնիւ և համոզված պաշտպանի, որը կը կատարէ Գլադստօնի բոլոր խոստումները։

Լօրդ Ռօզբէրի հասաւ Էդինբուրգ երեկոյեան 6 ժամին, և ուղիղ գնաց առաջուց պատրաստված այն մեծ դահլիճը, ուր ներկայ էին 5000 հոգի։ Հռետորին հանդիպեցին բուռն ծափահարութիւններով։ Ահա այդ ճառի բովանդակութիւնը, որ կարճառօտ կերպով բերում է «Temps» լրագիրը։

Յիշելով Գլադստօնի նախկին յաղթութիւնների մասին Միդլօտիանում (Գլադստօն այդ շրջանի ներկայացուցիչն է համայնքների ժողովում), հռետորը բացատրեց իր նորերս յայտնած կարծիքը իրլանդական ինքնավարութեան մասին, ասելով թէ, իր համոզմունքով, Անգլիան շուտով այնտեղ կը հասնի, որ իրլանդական բիլլի անգլիական հակառակորդների թիւը համայնքների ժողովում, որ բազկացած էր 200 հոգուց 1886 թւին և 60 հոգուց 1892 թւին, աւելի ևս կը պակասի։ Եթէ հակառակորդների թիւը այդ աստիճան կը պակասի, այն ժամանակ լօրդերի ժողովին աւելի ևս դըժուար կը լինի շարունակել իր դիմադրութիւնը։ Լօրդերի ժողովը այլ ևս չէ կարող արգելք լինել համայնքների ժողովին՝ իրագործելու իրլանդացիներին խոստացված ինքնավարութիւնը։

Լօրդերի ժողովը, հռետորի կարծիքով, շատ վտանգաւոր է Անգլիայի համար։ Այդ վտանգաւոր կռուի մէջ կառավարութիւնը յոյս ունի ժողովրդի օգնութեան վրա։

Վերջապէս անգլիական նաւատորմի մեծացնելը, ասեց լօրդ Ռօզբէրի, ոչ թէ սպառնական մի նըշան պէտք է համարվի, այլ ամենալաւ երաշխաւորութիւն եւրօպական խաղաղութեան համար։

Դրանք են բրիտանական առաջին մինիստրի ճառի գլխաւոր կէտերը, որ պէտք է մեծ տպաւորութիւն գործեն ոչ միայն Անգլիայում, այլ և ամբողջ Եւրօպայում։

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

—

Բուշր, մարտի 8-ին

Ինչպէս յայտնի է, Պարսկաստանի իւրաքանչիւր մի նահանգ անկախ կառավարվում է Շահի կողմից նշանակված նահանգապետով, որը «վալի կամ հաքեմ» անունն է կրում։ Այդ հաքէմները համարեա թէ անկախ են իրանց ներքին գործունէութեան մէջ։ Նրանք նախ քան նահանգապետ նըշանակվելը՝ մի որոշ գումար են վճարում նախօրօք Շահին իբրև հարկ, և ով շատ է վճարում՝ նա է նշանակվում այս կամ այն նահանգի կառավարիչ։ Մի խօսքով, նահանգը կապալով է տրվում անորոշ ժամանակով և այդ ժամանակամիջոցը տևում է կամ մէկ կամ մի քանի տարի։ Նահանգապետը աշխատում է որքան կարելի է շուտ վերադարձնել իր վճարած գումարը և այն էլ, որչափով ինքը կը ցանկանայ. ուստի թէ նահանգի և թէ բնակիչների բարւոք վիճակը կախված է նրանից՝ թէ որչափ բարեխիղճ, բարեհոգի և անկաշառ է նրանց վալին։ Քիչ չէ պատահում, որ ծոյլ, անհոգ և կաշառակեր վալիի հսկողութեան տակ գտնված ժողովուրդը շատ անգամ մեծ դժբաղդութիւններին է մատնվում թէ թանգութեան, աւազակների և գողերի ձեռքից, և թէ խաների ճնշողութիւնից։ Թէև այդպիսի դէպքերում բողոքում է ժողովուրդը, սակայն նրա վրա այդ էժան չէ նստում։ Մեզանում այժմ սարսափելի թանգութիւն է տիրում.—թանգութիւն բրնձի, որ ամենամեծ կերակուրն է ամբոխի, թանգութիւն նաև զանազան կենսական պիտոյքների։ Ամբոխը տրտունջներ է բարձրացնում վալիի դէմ, թէ նա անտարբեր է վերաբերվում դէպի ժողովուրդը, չէ մտնում նրա դրութեան մէջ։ Ամբոխի աշխատաւոր մարդը ստանում է դժոխային աշխատանքի վարձ օրական 10, 15 շահի, պարտաւորված է միայն խաշած բրինձ ուտելու համար ծախսել 1 ղրան, այսինքն ստացածից դեռ 5 շահի էլ աւելի. այն ինչ մի քանի տարի առաջ թէև դարձեալ նոյն գումարն էր վաստակում, սակայն այդ էլ բաւականանում էր իր օրական ապրուստի համար։ Այդ նոր վիճակի պատճառով ժողովրդի տրտունջները սաստկանում են. կանայք բողոքեցին այս բանի դէմ՝ մի քանի անստորագիր սպառնական նամակներ ուղարկելով վալիին։

Թանգութեան պատճառով սրանից մի քանի ամիս առաջ տեղացի վաճառականներին արգելվեց բրնձի արտահանութիւնը դէպի Ռուսաստան, արտօնութիւն տալով միայն ռուսահպատակներին. բայց որովհետև այդ անուան տակ շատերն սկսեցին արտահանել, ուստի միանգամայն արգելվեց արտահանութիւնը։ Վալիի հրամանով անցեալ օրը ականջից գամվեց իր խանութի դռնից մի մսագործ, որը ոչ միայն կրկնապատիկ գնով էր վաճառել միսը, այլ կշռից պակաս։ Ժողովուրդը գոհ է այդպիսի պատիժներից, որոնք սովորական են և երբ մի քանի ժամանակ չեն կրկնվում այդպիսի պատիժները, այդ վալիի անհոգութեանն են վերագրում։ Բայց և այնպէս այդ միջոցները և անօգուտ անցան. թանգութեան հետ շարունակվում է ժողովրդի տրտունջը։

Պարսկական ղրանի արժէքը հետզհետէ ընկնում է։ Վաճառականները ճգնաժամի մէջ են գտնվում, մանաւանդ նրանք, որոնք մեծ պարտքեր ունեն Ռուսաստանում։ Արծաթ տեղափոխելը Ռուսաստան արգելված է։ Լսում ենք, որ շատ պարսիկ վաճառականներ զանազան քաղաքներից դիմել են Շահին՝ խնդրելով միջամտել այդ խնդրի մէջ, հակառակ դէպքում, սպառնում են հրաժարվել իրանց պարտքերը վճարելուց։

Հայկական կեանքը շարժման մէջ է։ Հինգշաբթի, Վարդանանց տօնի պատճառով, պատարագ կար տեղիս հայոց եկեղեցում. սովորականից աւելի բազմութիւն էր ներկայ։ Պատարագից յետոյ տղայոց դպրոցում կատարվեց Վարդանանց տօնի հանդէսը աշակերտների և աշակերտուհիների մասնակցութեամբ։ Այս առաջին անգամն էր, որ Վարդանանց յիշատակը հանդիսով տօնվեց։ Նոյն երեկոյեան թատերասէրների ընկերութիւնը տուեց «Վարդանանց պատերազմ» ողբերգութիւնը և «Խօլերա» կատակերգութիւնը։ Դահլիճը լի էր բազմութեամբ. բացի հայոց հասարակութիւնից ներկայ էին նաև ռուսաց հիւպատոսը իր օգնականի հետ, անգլիական բանկի տեղիս ճիւղի կառավարիչը և մի քանի պարսիկներ։ Հետևեալ գիշերվայ ներկայացումը, որ կանանց համար էր, աւելի գեղեցիկ անցաւ, քան նախորդ գիշերը։ Անտրակտներում նուագում էր նուագածուների խումբը, որը կազմված է մի խումբ 8—18 տարեկան պարսիկ տղաներից, որոնք ամեն աջողութեամբ հայերէն երգեցին և նուագեցին «Մեր հայրենիք» հայկական մարշը։ Մուտքը մօտ 500 դուան է։

Անցեալ և առաջին տարվայ մետաքսի բերքից խրախուսվելով, այս տարի ևս շատերն են մտադիր շերամապահութեամբ զբաղվել։ Բաւական թւով յօներ մեծ քանակութեամբ սերմ են բերել։ Բրնձի և Թամբաքուի ցանքը սկսվել է։

Պարսիկների Ռամազան ամիսը լինելով՝ կեանքը շատ թմրած է։ Ցերեկը փոխված է գիշերի։ Ցերեկները բոլոր գործողութիւնները դադարեցրած են. դրա փոխարէն գիշերն են գործում։ Պօստը և հեռագրատունն անգամ նոյն վիճակի են ենթարկված։

Ս.

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Լրագիրների խօսքերով, Տուրինի դուման առաջարկեց թաղել Կօշուտին պանթէօնում։

—Մայրաքաղաքի լրագիրներից մէկի Լօնդօնի թղթակիցը գրում է հետևեալը. «Այժմ միայն կարելի է կատարելապէս համոզվել, թէ որքան զգալի է Գլադստօնի հրաժարականը։ Ոչ ոք չէ կարողանում այնպիսի ազդեցութիւն ձեռք բերել, որպիսի ազդեցութիւն Գլադստօնն ունէր արմատականների վրա։ Նրա մի խօսքը բաւական էր՝ նրանց կանգնեցնելու համար։ Այժմ արդէն հարց է ծագում, թէ որքան ժամանակ նրա յաջորդները կարող են իշխանութիւնն իրանց ձեռքում պահել։ Դրա մասին թեր և դէմ կարծիքներ են յայտնվում, բայց բոլորն էլ համոզված են, որ այժմեան մինիստրութիւնը գոյութիւն կունենայ միայն մինչև 1895 թիւը»։

—Բէլգրադի լրագիրները տպում են Բէլգրադի սինօդի վճիռը այն բանի մասին, որ սերբիական թագաւորի ծնողների ապահարզանը, որ թոյլ էր տուել հանգուցեալ Թէօդօսի միտրօպօլիտը, ջնջվում է, և 1875 թւին կատարված պսակը վաւերական է համարվում։ Զատկին սպասվում է Նատալիա թագուհու վերադարձը Բէլգրադ։

—Տուրինից հեռագրում են «Ստեֆանիի» գործակալութեանը հետևեալը. «Կօշուտի մարմինը զմռսված է և շրջապատված ծաղիկներով։ Հաւանական է թվում, որ Կօշուտի, նրա կնոջ և աղջկայ մարմինները կը փոխադրվեն Բուդապէշտ։ Բոլոր երկրներից անթիւ բազմութեամբ հեռագրեր են ստացվում, որոնց թւում և ունգարական մագնատների ժողովի նախագահից։ Տուրինի քաղաքագլուխը քաղաքի կողմից ցաւակցական հեռագիր ուղարկեց»։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Ի մեծ ուրախութիւն մեր տիկինների կարող ենք յայտարարել, որ Թիֆլիսի Թամամշեւների քարվանսարան սեպտեմբերի 5-ից էլէկտրական լուսաւորութեամբ կը լուսաւորվի։ Քարվանսարայի տէրերը այդ նպատակով պայման են կապել պ.պ. Վահանեանց, Եղիազարեանց և Գուրգէնբէկեան տէխնիկների հետ և իրաւունք են տուել նրանց էլէկտրականութեամբ լուսաւորել և Երևանեան հրապարակը ու հարեան տները։

⁂

Հինգ տարի առաջ բօշաների ազգագրութիւնն ուսումնասիրելու համար Լօնդօնում հիմնված գիտնական ընկերութիւնը այս տարի իր անդամներից մի քանիսին ուղարկում է Ռուսաստան՝ բօշաների պատմութեան, նրանց սովորութիւններին և ծէսերին վերաբերեալ նիւթեր ժողովելու համար։

⁂

Վիէննայում նորերս վախճանվեց Լուդվիգ Ֆրանկլ բաւական յայտնի բանաստեղծը, որը աւելի ևս յայտնի էր որպէս Վիէննայի դէմօկրատիայի այն գործիչներից մէկը, որոնք մասնակցեցին 1848 թւի անցքերին։ Ֆրանկլը բաղդի բերմամբ անվնաս մնաց այդ կռւում, հալածանքներին չենթարկվեց և սկսեց իր պատանեկական համարձակութեան պտուղները քաղել։ Ֆրանկլի «Համալսարան» բանաստեղծութիւնը 48 թւին առաջին անգամ առանց ցէնզուրայի տպված գործն էր։ Վերջին 25 տարիների ընթացքում Ֆրանկլը վայելում էր Վիէննայի հասարակութեան առանձին համակրութիւնը։ Նա «News Freie Presse» լրագրի աշխատակից էր։ Ֆրանկլ մեռաւ 84 տարեկան հասակում։

„ՄՇԱԿԻ" ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 16 մարտի։ Երէկ գրագիտութեան մասնաժողովի բազմամարդ ժողովը որոշեց մի յանձնաժողով կազմել՝ խմբագրելու այն միջնորդութիւնը, որ նպատակ ունի ընդարձակել ընթերցարանների, ժողովրդական ընթերցանութիւնների և ժողովրդի արտաքոյ դպրոցի կրթութեան ուրիշ ձևերի իրաւունքները։ Մասնաժողովը ստացել է Բէլօզօլովի 3000 ր. նուիրատւութիւնը։

ՄԻՏԱՎԱ, 16 մարտի։ Բալտիական հրդեհից ապահովագրութեան ընկերութիւնը դադարեցրեց ապահովագրութիւնների ընդունելութիւնը, յայտնելով, որ դադարեցնում է իր գործունէութիւնը։

ՀՌՕՄ, 17 մարտի։ Երէկ գեղարուեստների պալատում բացված է միջազգային բժշկական և առողջապահական ցուցահանդէս։ Ցուցահանդէսի բացմանը ներկայ էին օտար կառավարութիւնների պատգամաւորները, կօնգրէսի անդամները և շատ հրաւիրվածներ։ Ցուցահանդիսին ներկայ էր բժշկապետ Դանիլօվսկի։ —Երէկ Տուրինից դուրս գնաց արտագարգ գնացքը Կօշուտի, նրա կնոջ և աղջկայ նշխարներով, ուղեկցութեամբ ազգականների, պատգամաւորների և ունգարական աչքի ընկնող զանազան գործիչների. ներկայ էին Տուրինի սինդիկը և բազմաթիւ հասարակութիւն։

ՀՌՕՄ, 18 մարտի։ Երէկ, թագաւորի և թագուհու ներկայութեամբ բացվեց միջազգային բժշկական կօնգրէս։

ԲԵՐԼԻՆ, 18 մարտի։ Գասակարգերի խորհուրդը միաձայն ընդունեց անարխիստների դէմ օրէնքը։

ՎԻԵՆՆԱ, 18 մարտի։ Ֆրանց-Յօվսէփ կայսրը ժամանեց Աբբացիա, այցելեց գերմանական կայսրուհուն և նախաճաշեց գերմանական զինուորական «Moltke» նաւի վրա գերմանական կայսերական զոյգի հետ։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչ՝ Մ. ՄԷԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ցանկանալով ՍԱՉԽԵՐԷԹ վրացախօս գիւղի նորաբաց դպրոցի համար հիմնել գրադարան, և ի նկատի ունենալով դպրոցի սուղ միջոցները, սրանով խոնարհաբար խնդրում եմ յարգելի հեղինակներին, թարգմանիչներին և առհասարակ բարեգործ անձանց, օգնութիւն հասցնել գրադարանի հիմնարկութեան՝ գրքերով։ Ցանկացող նուիրատուները իրանց նուէրները կարող են ուղարկել հետևեալ հասցէով. Ст. Квирилы (З. Ж. Д.), мѣс. Сачхеры, учителю Маркару Саатянцу.

Ուսուցիչ՝ Մարգար Սահաթեանց։

(№ 32) 1—3

ԶԳՈՒՇԱՑԷՔ ԿԵՂԾՈՒՄՆԵՐԻՑ ԵՒ ՆՄԱՆՈՂՈՒԹԻՒՆԻՑ

ՍԱՊՕՆ

պրովիզօր

Ա. Մ. ՕՍՏՐՕՈՒՄՕՎԻ

կատարելապէս ոչնչացնում է գըլխի թեփը, նպաստում է մազերի կանոնաւոր աճմանը և իսկապէս դադարեցնում է նրանց թափվելը։

Իւրաքանչիւր կտորի գինը 30 կոպ.։ Երկու կտորանոցի գինը 50 կոպ։

Կեղծումներից խուսափելու համար պահանջեցէք իսկական սապօն, որը արկղի վրա կառավարութիւնից հաստատված մարկա ունի № 3374.

Ծախվում է ամեն տեղ։ Պահեստ, Մօսկվա, Լեալին փող. սեփական տուն։

(№ 23) (շ.) 3—20

ՀԱՐԿԱՒՈՐ ԵՆ

Արտասահման ուղարկելու համար 1, ՊԱՊԻՐՕՍՆԵՐ զանազան կշռի, առանց մուշտուկի և բանդերօլի. 2, ԳԻՆԻ՝ դիմացկուն և չը փչացող տակառներով և 3, ՄԵՂՐ։

Այն անձինք, որոնք յանձն կառնեն որոշ քանակութեամբ յիշեալ ապրանքներից պահել Բաթումում շոգենաւի, թող նեղութիւն կրեն իրանց պայմանները թողնելու „Արձագանքի" խմբագրատանը։

(№ 30) 2—2

Ի. ԵԱ. ԲՐՕՆ ՖՕՆ ԲՐԵՆՆԵՐ

Յանձն է առնում ՀԱՇՒԱՊԱՀԱԿԱՆ, ԳՐԱՍԵՆԵԱԿԻ և ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՄԱՏԵԱՆՆԵՐ պահելու գործը ամբողջ տարվայ ընթացքում, ռուսերէն, ֆրանսերէն, գերմաներէն, հայերէն և ուրիշ լեզուներով. ստուգում է զանազան առևտրական և արդիւնաբերական հաստատութիւնների հաշիւները և մատեանները, քննում, փակում, բանում, և կազմում է առևտրական մատեաններ. ընդունում է առևտրական մատեանների զանազան թիւրիմացութիւնների քննութիւնը և բացատրութիւնը։

Այն անձինք, որոնք չունեն հաշւապահներ, բայց ցանկանում են ունենալ կանոնաւոր հաշւապահութիւն, կարող են ունենալ ՃԻՇԴ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԻՐԱՆՑ ԳՈՐԾԵՐԻ ԸՆԹԱՑՔԻ ՄԱՍԻՆ ԵՒ ԿԱՆՕՆԱՒՈՐ ՄԱՏԵԱՆՆԵՐ։ Մատեաններ պահելու համար վերցվում է տարեկան 100 րուբլի և աւելի։ Հասցէն Елизаветинская, № 25, ստրիկմանական վարչութեան վերին յարկում։

Ուսուցանում է։

ՀԱՇՒԱՊԱՀՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՐԱԳԱԳՐՈՒԹԻՒՆ

վճար { Հաշւապահութեան ամբողջ կուրսի համար (2—3 ամիս) 40 ՌՈՒԲԼԻ
Արագագրութեան տեսական կուրսի համար (2 ամիս) 50 ՌՈՒԲԼԻ

Պարապմունքներ լինում են ամեն օր, երկու ժամվայ ընթացքում։ Առաջադէմ պարապմունքների համար ՎԿԱՅԱԿԱՆՆԵՐ րէալական դպրոցի դիրեկտորից և ուրիշ անձերից։

(№ 16) (շ) 6—100

ՇՎԷԴԱԿԱՆ ՄԱԳԱԶԻՆՈՒՄ Միքայէլեան փողոցի վրա № 99, ստացված են՝ պարտիզային, ծաղկի և խոտի ՍԵՐՄԵՐ, թարմ, շվէդական՝ շոգիով եփած վարսակի ալիւր և կրուպա։ Շատ օգտակար է գործածել առհասարակ, մանաւանդ հիւանդ, նիհար երեխաների համար։ Այնտեղ էլ ստացված է ՊՐԻՄՈՒՍ նոր խոհանոցը որը վառվում է կերօսինով, առանց պատրոյգի։ Պրէյս-կուրանտները ձրի են տրվում։

(№ 20) (շ.) 10—10

ԿԱԽԵԹԻ ԱՅԳԵՏԷՐԵՐԻ

ՆՈՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ

ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

Յատուկ նպատակ ունենալով մատակարարել տեղական և ներքին Ռուսաստանի շուկաները բացառապէս Կախէթի բնական գինիներով ընկերների այգիներից, սկսում է իր գործողութիւններ այս տարվայ փետրվարի 5-ից։ Արտահանութիւն, մեծ քանակութեամբ և փոքր քանակութեամբ ծախելը կը կատարվի Թիֆլիս քաղաքում ընկերութեան պահեստներում և մագազիններում, որ գըտնվում են՝ 1-ն Միխայլօվսկայա փողոցի վրա, տուն Սլիվիցկու. 2-րդ, Երևանեան հրապարակի վրա Թամամշեվի քարվանսարա։

(№ 13) 10—10

Նոյեմբերի 1-ից կը ստացվի ՊԱՍՏԵՕՐԻ ՍԻՍՏԵՄՈՎ ՊԱՏՐԱՍՏԱԾ ԲՐՈՒՍՍԱՅԻ ԲՈԺՈԺԻ ՍՊԻՏԱԿ ՏԵՍԱԿԻ ՍԵՐՄԸ, որ արդէն յայտնի է ամբողջ Կովկասում և Պարսկաստանում իր յատկութիւններով և տուած առատ բերքովը։ Սերմը կը ստացվի ուղղակի յայտնի „Էկօնօմիտես" ֆիրմայից։ Գնել ցանկացողները կարող են դիմել ԵՂԲ. ՄՆԱՑԱԿԱՆԵԱՆՆԵՐԻՆ, Բաթումում, Թիֆլիսում, Բագվում, Նուխում Աղա-Մուսա Մահմէդօվին.

Այս հասցէով. Бр. Мнацаканянцъ, Тифлисъ, կամ Баку, կամ Батумъ.

(Ե. շ.) 30—32

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

(Թիֆլիս, Նազօրնայա փողոց, № 9)

Ցանկացողք, ունենալ իրանց առևտրական գործերի համար ուսման ընթացքը աւարտած աշակերտներ և աշակերտուհիներ, թող բարեհաճեն դիմել կուրսերի հիմնողին, Ս. Մանուէլեանցին։ Աւարտողները ստացել են մասնագիտական առևտրական կրթութիւն, Կովկասի ուսումնարանական շրջանի հոգաբարձուի հաստատված ծրագրի համեմատ, և ունեն օրինաւոր ատեստատներ։

Կուրսերի ծրագիրը և կանոնները կարելի է ստանալ ձրիապէս եղբ. Ծովլիանովների բանկային գրասենեակում և կուրսեր հիմնողի բնակարանում։ Օտարաքաղաքացիք դիմում են՝ Тифлисъ, учредителю коммерческихъ курсовъ С. П. Мануэльянцу.

№ 88 11—20

ՁՈՒԻ ՍԱՊՈՆ
ЯИЧНОЕ НУМЕРНОЕ МЫЛО.
ГЛИЦЕРИНОВОЕ ЯИЧНОЕ МЫЛО
ВѢСОВОЕ ЯИЧНОЕ МЫЛО.
Ա. ՍԻՈՒ ԵՒ ԸՆԿ

20—52 (շ) № 86

Մ. ՄՈՒՐՏԱԳ, մի քանի ազատ ժամեր ունենալով, տալիս է ԱՆԳԼԻԱԿԱՆ ԼԵԶՈՒԻ դասեր։ Լաւ յայտնի է, որ նրա մեթօդով աշակերտները շատ շուտ կարողանում են իւրացնել կանօնաւոր արտասանութիւն։ Հասցէն. 4, Լաբօրատօրնայա, բագում։

(№ 30) 2—2



ՄԻՋՈՑ ԽԱՐԲՈՒԽԻ ԴԷՄ

բժշկական դեպարտամենտից թոյլատրված

ՕԼՖԱԿՏՕՐԻՈՒՄ ՆՈՒԴԻԼԻՆ

Մ. Լ. ԺԻՐՄՈՒՆՍԿՈՒ

ծախվում է 40 կոպէկով

Դեղագործական Ապրանքների Վաճառման կովկասեան ընկերութեան մէջ Թիֆլիսում։

№ 128 (91 թ.) 15—40

Дозволено цензурою, Тифлисъ, 18 Марта 1894 г. Типографія Канцел. Главнонач. Гражданск. частью на Кавказѣ, Лорисъ-Меликовская ул., д. каз.